

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Աստղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

Chycey  
Zyndf

Chycey Zyndf

891.99  
4-75

1924



ପ୍ରାଚୀ ପ୍ରକଳ୍ପ

407 3-56



ପ୍ରାଚୀ ପ୍ରକଳ୍ପ

891.99  
4-75

-6 NOV 2011

891.99  
4/21/75 ✓  
T-15  
P-15

ԱՐԱՏ  
ՎՃՏՈՒԹԻՒՆ

ԱԱԼԱՄՆԱՄԵ

891.99 | 2933-24  
4/21/75

Առաջնամուտ


194-3285 28/3/34

11.10.2013

54712



2933 - 74



ԱԶԱՏ ՎԵՏԱԿԻՆ

ՍԱԼԱՄ ԱԼԵՔ ՔՈՒՄ

Սալամ ալեք քում,  
Արևելք,  
քո նոր շայիրից  
բարե՛ քեզ:  
Նորից,  
ու նորից  
ու նորից  
հրաշունչ յերգեր,  
արե՛ քեզ:

ԶԵ վոր վորդիդ եմ՝  
քո ցեղեն,  
բոցեղեն մայր իմ Արևելք:  
Յերեկ՝  
կուռքերի  
դու գերի,  
այսո՞ր՝  
արեյերգ  
Արևելք:

Վորպես  
ցունց,  
ծփանք  
ու ցասում՝  
ասում յեմ յերգեր զարթոնքիդ.

ու թող աշխարհի հինգ մասնւմ  
գովքու դողանջի,  
Արևելք։

## Սալամ

վաղվա վառ որերիդ.

## Սալամ

պայքարիդ հրեղեն.

## Սալամ

մարտնչող նորերիդ.

## Սալամ

նորից

ու նորից։

## Սալամ ալեք քում,

Արևելք։



Գ Ի Բ Զ Ի

Հանաքով զըած գիրը՝ գիր չի,  
արնե թանաքով ենք զըում մենք,  
հանաքով զըած գիրը՝ գիր չի,  
կրակե զըշով ենք զըում մենք...

Թե թանաքը ջնւը ե,  
պոետ,  
զըածը զնւը ե, գիր չի.  
աշխարհը հիմի ուր ե,  
զըածը զնւը ե, գիր չի...

Յերազի մարդն ե յերգումը.  
Շիրազի վարդն ե յերգումը.  
կակուդ մի յար ես վարձել դու,  
յարի շայիր ես դարձել դու...

Մեր շոգեշաչ որերը

որորոց չեն,

որորող չեն,

հաշիշ չեն:

Մեր շոգեշաչ որերը  
լպրծուն լորձունքի վիժանք  
ու ժանդ չեն...

Հիմի սիայն կադ շնւնն ե,  
վոր նախշուն յարի բայաթին ե վոռնում...

Մեր որերի  
նորերում  
վրեժ կա,  
հույզերի հրվեժ,  
արևի ջրվեժ կա...

Իսկ քեզ,  
պոետ,  
հուզել են  
հուրերի հեքը,  
մըրիկի յերգը:  
Իսկ քեզ,  
պոետ,  
հուզել են  
որերի յեռքը,  
բյուրերի ձեռքը...

Թե չե  
մեզ ի՞նչ  
յարիդ թուշն ու նուշը.  
վաշն ու վուշը.  
յարիդ փուշն ու շամամը:  
Մեզ ի՞նչ  
արևելքի մեղկ համամը.  
քնաբեր գինու  
գովքը.  
լուսնի թովքը,  
մեզ ի՞նչ...

Հիմի միայն կաղ շունն ե,  
վոր նախշուն յարի սերենաղն ե վոռնում...

Շարած բառերիդ տապ պիտի,  
թափ պիտի,  
թնդացող թնփ պիտի.—  
վոր թոփը  
կրակ կապի,  
կրակ թափի,  
վոր տապի սրտեր...

Խոսքերդ պիտի տենդեն,  
թոփի թափով պիտի թնդան,  
վոր աշխարհը ցնցում ըզգա.—  
ինչպես ըմբիշտի գուրզը հսկա,  
վոր թնդում ե հողի կրծքին...

Կուզես,  
պոետ,  
պատմեմ  
սերի մի սիրուն ոռմանս:  
Լսիր:

Կապտաբաճկոն Հասանը  
Ֆաթիմային սեր ունի.  
կարմրաշապիկ Ֆաթիման ել՝  
Հասանին:  
Նրանց սիրում  
լորձունք չկա,  
արցունք չկա,  
անկում ու բարձունք չկա:  
Չկա:

Ֆաթիման Հասանի փերին չի.  
Հասանը Ֆաթիմայի գերին չի:

յերկուսն ել արեստմ են.  
յերկուսն ել աշխարհին բարեստմ են.  
յերկուսն ել մասն են բյուրյերկուսին:

Թե չե  
ինչ  
ոմը  
սին.  
ու  
սին.  
ա  
մու  
սինք...

Թու  
քու նամուսին:

Հիմի միայն կաղ շնչնն ե,  
վոր նախշուն յարի ռոմանսն ե վոռնում...



## Զ Ի Ա Պ Ա Ե Մ

(Բոկական ձիու իրական կյանքից)

Արևը թեհրանին  
բոթնւմ ե:  
Տոթնւմ ե  
թեհրանը շոքած:  
Արևը կրծքին չոքած՝  
ուզում ե բերանը ծեփի:

Ամառ ե:  
Փողոցները՝ փոշի:  
Համառ ե  
յերկինքը հրակ:  
Յերկինքը վառել ե կրակ,  
ուզում ե յերկին յեփի:

Վոռնացող բազարիցն այս ժամին՝  
մի ձի ե անցնում կամաց.  
Վոսկրացած  
ու ցած  
կռացած,  
հայացքը գետնին գամած:

Զաֆարը բեռնած նրան,  
բռնած սանձը ձիգ քաշնւմ:

Քաշնւմ ե,  
քշնւմ.  
բոթնւմ:  
Զին ել քրտնախաշ, հոգնած  
քայլնւմ ե, հեռնմ, տոթնւմ...

Հեռնւմ ե, հեռնմ ե խոր.  
ու միտք ե անում,  
խոկնւմ:  
Ո՛, վորքան վիշտ կա հոգում.  
ո՛, վորքան հուշեր անշող:  
հիշում ե որերը հին,  
յեվ դիտում ներկան խավար.  
հներն ու նորերը՝ նույն,—  
տառապանք,  
զրկանք,  
ավար...

Ութ յերկար  
ու մութ տարի՝  
մեջքին միշտ բեռներ, բեռներ,  
կտրել ե, անցել լեռներ,  
ճամբաներ յերկար ու ձիգ,—  
Համադան,  
Քիրմանշահ,  
Բաղդադ:  
Կրելնե անտրտունջ և հեզ՝  
բեհեզ ու մետաքս, արծաթ...

Իսկ վարձքը,—  
մի բուռ դարի,

(արի կուշտ յեղիք, ապրիք):  
Իսկ քո տրտունջին,  
կանչին,  
շաշում ե դամչին անսիրտ...

Այսոր ել, այս կըակ—շոքին՝  
քու հողին դուրս գա, — քայլիք:  
Բեռ ե  
թե լեռ ե մեջքիդ:  
Թե կուզես  
խրտնիք,  
ցատկիք.  
թե կուզես  
քրտնիք,  
սատկիք.  
ինչ ոգուտ, ստրնւկ,  
քայլիք...

Հ.

կանգ ես առնում.  
ինչպե ե ես:  
Վոտքըդ խփեցիք քարիք:  
Ուզում ես լայնթոք շնչել:  
Խանութում տեսար դարիք:

ՀՌ,

յես քու...  
դե առ,  
դե կեր,  
այ քեզ  
մեկ, յերկու, յերեք:  
ՀՌ,

առի՞ր համը դամչու,

այդա, չու,

շարժվիր,

քայլիր:

Շարժվում ե կրկին դանդաղ.

Փոխում ե մի քայլ, յերկու:

Տնքում ե, հետև կրկին.

յեվ նորից մի քայլ, յերկու:

Աչքը կարմրել ե:—Մուժ ե:

Գլխում շամփուր են խրում:

Ա՞րե ե: Մութ ե: Ուշ ե:

Ո՞վ ե մտրակում, հրում:

Բայց պիտի քայլես, ստրուկ:

Դե քայլիր, քայլիր, քայլիր:

Հանկարծ, ստրուկը փնչաց.

ու կանգնեց, մեկից, անշարժ:

Չե՛, ել Չի քաթլի:

Յերթե՛ք:

ԲԱՎ Ե ՈՒԹ ՏԱՐԻ ՔԱՑԼԵ՛Ց:

Չե՛, ել Չի քաթլի.

Յերթե՛ք,—

իր Անխիլօ Տիրոջ ՀԱՄԱՐ:

Դամշին շառաչեց, — շրախկ.

մեկ, յերկու, յերեք, տաս:

— ՉԵ Ե Ե Ե:..

— ՉԵ:

իր Տիրոջ ՀԱՄԱՐ ՅԵՐԹԵ՛Ք:

Չի ԲԵՐՆՈՒԻՄ իր ՄԵՋՔՆ ԱՄՈՒՐ:

Զաֆարն իր բերանը բացեց:

սկսեց

մորից:

հորից:

հնից

ու նորից:

ցեղից:

հոր հոգնեց:

տեղից:

պապից:

Կապից պինդ քաշեց:

հրեց:

իւնչալը խրեց կռան:

մտակեց մեջքից, փորից:

— Ը. չԵ Ե Ե Ե:

Վորպես մի արձան քարե

կանգնել ե անձայն,

խոժնու:

Չի շարժվում տեղից:

— ՉԵ:

Հանկարծ.

ականջները ցից ցցեց,

կծեց իր լեզուն ուժով,

ու փնչաց,

խրխնջաց

մեկից.

ու մի կից տվեց ամուլ  
Զաֆարի յուղու փորին:  
Ծառս յեղավ,  
բեռը նետեց,  
նետից ել արագ սուրաց:

Բազարում փախ ե.

փախ ե:

- ՀԵՅ, թռեք:
- Անցեք:
- Փախեք:
- ՀԵՅ, բռնեք:
- Սանձեք:
- Կախեք.

Հը,  
դեմ տվողը կա, թող գա:

Խըստ ե խրխնջում հիմի:  
Կրակ ե սրսկում սմբակից:  
Աչքը՝ հրաժայթք լավա:  
Ականջները՝ սուր սվին:  
Փաշը հովածուփ դրոշակ:  
Ռունգները լայն բացած  
խոր և ուժեղ են շնչում:  
Վորպես մի հրեղեն թռչուն  
թռչում ե, թռչում, թռչում....



## ԱՅԵՆ ՈՐ ԱՌԱՎՈՑ

2933 - Հ

Ամեն որ առավոտ, յերք լույսը բացվում ե,  
վառ արել բանվոր զարթնում ե քնից.  
յերկնահոս կապույտ ջրով արագ լվացվում ե.  
շող շապիկը հազնում դուրս թռչում անից:


Կապտամուժ դարբնոցից մեզ հետ խոսնում ե.  
որ ու ժամ ե դարբնում հայացքը նրա.  
շող քրտինքը ճակտից առատ հոսնում ե  
ու թափում նոր զարթնող աշխարհի վրա:

Սուլիչները յերկրի ահա սուլում են,  
գործարան են կանչում բանվորին արթուն.  
ուր անիվս ու շոգին ամուր ձուլում են  
նոր մարդը յերկաթին ու մարդը մարդուն...

Այդ ժամին փողոցով շտապ անցնում ե  
մի բանվոր վառ աղջիկ, կենսալի և վես.  
մոտենում ե նա ինձ, ուրախ հանձնում ե  
իր աչերը աչքիս ու քաշում թևես:

Յեվ հնչուն քրքիչով ինձ բարենում ե.  
մենք իրար ենք գրկում փողոցում ժխոր.  
սրտերում մեր ջանել սերն արենում ե,  
սերը՝ կիրք մարդկային բեղմնավոր ու խոր...

Մտերիմ զրույցով մենք շտապում ենք  
դեպ մոտիկ գործարան հսկակերտ, ամուր.  
ուր ալ-շեկ հնոցի դեմ ձուլում, տապում ենք  
ու կերտում նոր աշխարհ մարդկության հանուր:



Բ Ա Մ Պ Ե Յ !

Եյ,  
Բնմպեյ,  
բնմբ ես դու:  
ինդիայի սրտում՝  
դռւմ—դռւմ  
բնմբ ես դու,  
Եյ,  
Բնմպեյ:

Թե թափով թնդաս դու՝  
ցավերն  
ու ավերը,  
դավերը դառն  
կդառնան թնգ.  
Եյ,  
Բնմպեյ:

Արդեն,  
արդեն  
վառվնւմ են պատրույզներդ բոմբի:  
կըալ ե առել,  
վառել  
պատրույզներդ բոմբի,  
Եյ,  
Բնմպեյ:

Պատրույզիդ կըակ տվաղը,  
շատ:

Ծովափիդ շարք շարփած  
շոգեթոք նավերիդ մատրուները.  
շոգեփազ քարփանիդ մեքենավարը.  
ծինաններիդ ծուխ տվող բանվճրը:  
վճրն ասեմ, վճրը,  
Եյ,  
Բնմպեյ:

300,000,000—ի սրտում՝  
դռւմ, դռւմ, դռւմ  
դու թնդաս պիտի.  
պիտի թնդաս,  
վորոտաս,  
տաս  
արհ.  
Եյ,  
Բնմպեյ:

Լորդն ու սահիբը՝  
այսորվա տերերդ ոձ, —  
վորոնք  
խնց են տվել  
300,000,000—ին,  
պիտի սոլան,  
դոդան  
300,000,000—ի կրունկի տակ.  
Եյ,  
Բնմպեյ:

ԿԸ ՀԻՆԻ,  
ԿԸ ՀԻՆԻ ԱՅԴՊԵ՛Ս,  
ՎԵՌ  
ԲՆԻՄՎԵՅ:

Գալիք ոմբագոռ որեքի՞դ համար,  
գալիք ամբակուռ նորեքի՞դ համար,  
300,000,000—ի տոնի համար  
ոմբածիդ յերգ եմ պահել,  
Եյ,  
Բնիմվեյ,  
սալամ՝ քեզ:



### ՀԱՐԵՄԻՑ ԴՈՒՐՍ

Հարեմից դուրս փախչող հարձի պես դեռահաս՝  
կարոտ վառ կյանքին ու սերին, —  
ամպերի արանքից լուսինը դուրս սողաց,  
մաղերը ցանցիր ուսերին:

Համարձակ քայլում ե կապուտակ յերկնքից՝  
դեպի հեռուներն արեի.  
ու ճամբին աստղերը՝ ջահելներ շրջմոլիկ՝  
շարքով կանգնել են բարեկի:

Հարեմից դուրս փախած հրաշյա թրքուհի՝  
լուսինն անցնում ե հարբանքով. —  
աստղերի հիացիկ հայացքին անտարբեր,  
վորոնք նայում են տարպանքով:

Ո՛, վորքան ե տանջվել ամպահյուս քողի տակ,  
տանջվել հարեմի յեսիրում.  
ատում ե փաղաքշանքն ստրուկի, իշխողի.  
միայն արեին ե սիրում:

Սիրում ե նա միայն արեին աշխատող՝  
ինչպես մի բանվոր տիտանի.  
սիրում ե նա միայն արեի սերը հուր,  
սերը աշխարհին պիտանի...

Սիրում ե նա միայն արեին, վոր գիտի  
մահ տալ խավարին ու ցրտին.

Սիրում ե նա միայն արեին, վոր պիտի  
լինի սրտակից իր սրտին:

Քողազերծ ու հալարտ, հարեմից դուրս փախած,  
կարոտ արեին ու սերին.

Կապուտակ յերկնքից լուսինը քայլում ե,  
մազերը ցանցիր ուսերին:



### Ա Զ Ր Բ Ե Յ Զ Զ Ա Ն

Զան,  
Ազրբեյջան,  
Եյ, ջան,  
Եղիթ յես հիմի,  
Ջահել.  
Վառել յես  
բյուրամոմ ջահել,  
Վառել յես  
շող — շեմս — արև.

Ջան,  
Ազրբեյջան,  
Եյ, ջան,  
Ասբահ խեյլ,  
Ասլամ,  
Բարեւ:

Պարզել յես բազուկդ կուռ  
դեպի  
Քերպելա,  
Մեքքա.  
Բանդում ես  
ալահը ծեր.  
Քանդում յես  
մինարա, մզկիթ:

Դրել ես,  
մի չիսուս,  
Ալ՝  
պողպատե սալի վրա,  
ծեծում ես մուրճովդ ամուր  
ու շինում  
անիվ,  
մոտոռ...

Խփիր հրանի դռան  
կունըդ հուժկու և կուռ.  
քանդիր ամրոցները փակ,  
ջարդիր լուսամուտ ու դուռ:  
Թող Շահի—մահի յերկրում  
արեի բերկում,  
ցնծում.  
Թող ցնցում, ցասում ծփա  
իշի—ֆահլայի սրտում:

Զան,  
Ազրբեյջան,  
Եյ, ջան,  
Ջահակիր Ջահել,  
ջիվան,  
կանգնել յես արեի դիվան  
կըծքաբաց, ալ կապած,  
պարթե.  
Նոր Արևելքին - Շարքին  
վառում յես  
հրվառ հրդեհ,  
հեքի

ու մեզի հոգում  
փռում յես  
աստղեր հրթե...

## 2

Զան,  
Ազրբեյջան,  
Եյ, ջան,  
Քո Թաթիմային սալամ,  
վոր յերեսին ել քող չունի,  
վոր շարիաթից ել դող չունի.  
վոր յեթե ցանկա,  
ուզի՝  
կը հուզի  
սրտեր իզիթ.  
վոր հինա չի դնում  
հիմա  
մազերին,  
ձեռքին,  
խեքին...

Նաջիբաներիդ՝ սալամ,  
Թաթիմաներիդ՝ սալամ,  
Զեմիլեներիդ՝ սալամ,  
սաբան խեյը,  
սալամ,  
ու սեր..  
Իմ յերգը հարեմ չունի,  
հարեմի դուռն ե քանդում,  
ուր հազար սրտեր ձեզպես  
խեղդվում յեն փակված բանտում:

Իմ հրեեզ  
կրքնւմ,  
գրկնւմ,  
իմ զրած  
զրքում,  
բաջի,  
յեռում ե  
սերը շեմսի  
ու դողանջ  
պարքար քաջի:

## 3.

ՀԵՅ,  
Բաքնւ, Բաքնւ, Բաքնւ,  
բա քու  
հորերը նավթի,  
ինչ,  
Սըր Թոկս կուզի զավթի,  
բնքս խաղալ կուզի քեզ հետ:  
Թող գործի անցնի,  
փորձի,  
վոր զգա ուժը բոքսիդ...

ՀԵՅ,  
Բաքնւ, Բաքու, Բաքնւ,  
բա քու  
ֆանտաններ զարկող,  
բա քու  
հորերը սարքող  
ուսբոչի,  
իշխի,

բանվրի. —  
այն վոր  
լոր հորեր ե փորում,  
այն վոր  
նոր որեր ե բերում,  
բա  
ինչպես չ'ասեմ նրան՝  
— Здорово товарищ Иван!  
وار اول آی یولداش حسن! —  
— բարև քեզ, ընկեր Սաքո!

Զան,  
Ազրբեյջան,  
Եյ ջան,  
իդէթ յես հիմի,  
ջահել.  
վառել յես  
բյուրամոմ ջահեր,  
վառել յես  
շնորշում արե՛.  
ջան,  
Ազրբեյջան,  
Եյ ջան,  
սաբահ իւեյր,  
սալամ,  
բարե՛:



## ԱՐԵՒԵԼԾԻ ՓՈՂՈՅՈՒՄ

Ծերացած,  
վերացած  
ու քնկնտ.  
լայն ջուբա հագած  
իմամի նման՝  
կանզնած ե մղկիթը հնամյա  
փողոցումն ել Շարքի:

Հոշոտված,  
ինչպես գանկլ Հասան-Հուսեյնի:  
փոշոտված,  
խուլ  
ու խարխուլ՝  
կանզնած ե  
փողոցումն ել Շարքի:

Մինարան նրա՝  
ինչպես  
ծուռ  
ու ժանզոտ մեխ՝  
խրվել ե  
յերկնքի կը ծքին մով:

Հեյ,  
արկերդ ե  
Արկելքը

հիմի.  
հեյ,  
արկելքը  
բարկերդ ե  
հիմի...

Փողոցները  
յեռք  
ու յերդ են,  
ձայների ցանց,  
հպանք,  
ու ծփանք են  
հիմի...

Մինարի կոկորդից  
ծռւյլ՝  
թռւյլ և հնչում  
իմամի կանչը  
հիմի.  
— «լա իլ ալլաման» — ը:

Դեմ ու դեմ մինարի,  
արի,  
վերձիգ  
ծխնելույզն ե կանգուն.  
անքնւն,  
հրձիգ...

Ուխայ,  
ծխում ե ղայլան շոգեհամ,  
ու հավաքած բկում  
ու թուքը

թքնւմ  
մինարի գանկին լերկ:

Ամեն առավոտ—իրիկուն,  
յերբ  
սորից  
ու նորից  
մինարից հորանջում ե  
իմամ իդրիսը.  
—«ալլահ եքբանամը».

Ծխնելույղն ել  
աժդահա  
ահա  
սուլում ե սուր—սուր.

— «մինարա,  
զուր, զուր,  
զու, զու, զու  
փ ա ս'  
զու, զու, զու  
ս' ս' ս'»:

Ու հանկարծ,  
ասես,  
մի կից են տալիս մինարին.  
մեկից  
խեղղվում ե  
ձիչը կորդում:  
իմամն իր կուրծքն ե ծեծում,  
հեծեծում.  
— «իստաֆրուլահ»:

Ահա,  
զիւ,  
սուր  
սուլում ե սուլիչը ծխնելույղի:

Հիմի  
ել Շարքի ալամը շարք—շարք  
ջամի գնացողը չի'.  
ջամում աղոթողը չի'.  
ել չի'...

Հիմի  
ել Շարքի հաղարները շարք-շարք  
շարժվում են շտապ  
դեպ շոգենամազ,  
դեպ շոգեհանդես վես...

Արևելքի  
արևվառ փողոցում  
կանգնած,  
դեմ—դեմի',  
դուշման, —  
մինարան քայլմառ՝ իմամ իդրիսի նման.  
ծխնելույղն աժդահա՝ ջահել մերենավար Զամիլի նման.

կանգնած են  
դեմ դեմի',  
դուշման:

Ամեն առավոտ—իրիկուն,  
յերբ զառանցում ե  
ծերուկն անատամ՝

մինարքն,  
ջահել Ջամիլը՝  
ջիզրու  
յերգում ե  
սուր, սուր.  
— «զուր, զուր,  
դու, դու դու  
փ ա ս ,  
դու, դու, դու  
ս ս ս »:



## ԱՄԵՆ ՏԵՂ

1

Յեղբայր իմ, ամենուր ես  
ու միշտ ել քեզ տեսել եմ.  
այստեղ ուր դու ապրում ես՝  
յես ել կամ ու յես ել եմ...

Թե մտրակը քեզ ցաղկում ե,  
մարմինը պալարվում ե,  
ցավից քո, ո յեղբայր իմ,  
իմ սիրտն ել գալարվում ե:

Կարծես թե բիրտ մտրակը  
մարմինս ե վոր խաղում ե.  
կարծես թե իմ վերքիցն ե  
արյունը, վոր վաղում ե:

Յերբ յեռք ե մարտի յերգը,  
յերբ յերգը շեփորնւմ ե.  
ու կամքը կապարե կուռ՝  
հին կյանքը թե փորնւմ ե.

Կարծես թե իմ հոգին ե,  
վոր շանթ ե, շառաչում ե.  
կարծես թե հին աշխարհը  
զարկիցը հառաչում ե:

Կարծես թե հենց այդ յես եմ,  
վոր վառք եմ, վրեժի պես եմ.  
Կարծես թե հենց այդ յես եմ  
մարտում գոռ՝ մեծ ու վես եմ:

Ընկեր իմ, պայքարումն ել,  
ցավումն ել քեզ տեսէլ եմ.  
ամեն տեղ, ուր վոր կաս դու<sup>ւ</sup>  
յես ել կամ ու յես ել եմ...

## 2

Կաց, անցորդ,  
կաց, վոր յերգեմ քեզ.  
կաց, վոր գրեմ քեզ գրքումս:  
կաց, անցնրդ,  
կաց, վոր գրկեմ քեզ,  
կաց, վոր սեղմեմ քեզ գրկումս:

Անցնրդ,  
դեմքդ ինձ ծանոթ ե.  
ձեռքիդ վրա կոշտեր կան կարծը.  
քեզ չերգելն ինձ ամոթ ե,  
ամոթ ե քեզ չերգել բարձր:

Ամեն տեղ տեսա քեզ.  
ամեն տեղ նույնն ես.  
ամեն տեղ կաս դու.  
ամեն տեղ ուր հառաջ կա.  
ամեն տեղ ուր շառաջ կա  
ամեն տեղ կաս դու...

Ահա տեսնում եմ քեզ,  
Մուսհկումն ես,  
այս փողոցը Բաբ ել ֆառախն ե. —  
անցնում ու սուշում ես,  
սուշոցը  
նոր որերի շառաջն ե...  
Լսում ես  
Բասարից Բաղդադ  
շողեքարվանն ե սուրում,  
անծայր աշխարհն առաջն ե...

Նորից, նորից դու ես  
Թեհրանի փողոցում մեծ.  
Շահի շքեղ քոշկի շուրջն անգործ դեղերում ես  
ու քերում ես  
քու սոված ու փոս ընկած փորը:  
Անցնրդ,  
փորիդ փայը՝  
կես բաժակ անշաքար չայը  
ունես վոր...  
Փեքինի ծուռ փողոցնումն ել  
ելի, ելի տեսա քեզ.  
ճակատիդ քըտինք կա շիթ շիթ,  
մանտարինի մտրակը խաղում ե կաշիդ.  
ու ճաշիդ  
մի մսխալ բրինձ ես տանում դու:  
Բոմպեյի մեծ մեյդանում՝  
խոր ու խուլ հազում, հազում ես,  
ու վազում ես,  
տանում մեջքիդ բարձած

մետաքսի հակը:  
Ու հեռւմ ես տակը.  
ու տաքը տանջում ե քեզ,  
յեղբայր իմ:

Անգորայի մզկիթի դռան՝  
ձեռքիդ կռան կռւու,  
ջնջում ես ձախ ալիֆը,  
կաղ խալիֆը.  
Բնչ փաթիշահ,  
ել Բնչ բեյ,  
փաշա:  
Հեյ,  
յաշա,  
սաղ ոլ,  
աֆերիմ,  
Եշի — արքատաշ — ընկեր իմ...

Անցորդ,  
ով վճր ես դու,  
ձայն տուր իմ կանչին:  
Արար ես,  
թռւրք  
կամ չին,  
ինդիւս.  
Հե վոր խազում ե քո պինդ ուսը  
դամչին....  
Բնչ լեզվով կուղես խոսիր դու,  
ինչ ձեռվ կուղես սալամ տուր,  
մուերմի՛ պես,  
ընկերի պես,  
յեղբնը պես,  
ընկեր իմ:

## ՍԱԼԱՄ!

ՀԵՅ  
Արևելքի մոնչացնդ ալամ,  
սալամ քեզ.  
հուր ու հրագիր դալամ քեզ:

Այն ով ե,  
վոր ինձ ձայնում ե  
— յերգիր:

Այն ով ե,  
վոր հազարահունչ ձայնով ե. —  
— Ալին,  
Գևոն  
Ցզան Ցին  
Հասան,  
Կոր մարդը՝  
Մասսան.

բանվոր մասսան — այսմ:  
Նոր մարդուն ալամին՝  
սալամ:

Մարդ,  
հուզեցիր ինձ.  
ուզեցիր  
վոր յերգեմ քեզ:  
Մարդ,

յասումիդ ծփանքը տեսել եմ.  
յես ել եմ,  
յես ել եմ ծփում:

ՀԵՅ,  
Արևելքի ծփացնղ ալամ,  
սալամ քեզ:

Արևելք,  
յերկաթե գծերը  
քեզ ցանցնւմ են,  
Ուխտապան ծերը  
կը մեռնի:  
ՄԵՐՈՒՆԻՇ ԹՌՈՂ:

ԿՈՆԴՈՆԻ ՎՈՍԿԵԿՈՐԹԸ ՀԳԻԱԵ,  
ՎՈՐ ՎՈՐՔԱՆ ՑԱՆՑՈՒԽՄ Ե ՔԵԶ,  
ԱՑՆՔԱՆ ՑՆՑՈՒԽՄ Ե ՔԵԶ,  
ՎՈՐ ՎԱՆՀ ՑՆՑԱՍ ԴՈՒ...

Քո շողեկանչին վաղվա.  
Քո գորականչին վաղվա.  
Քո լուսաբացին՝  
նվեր իմ զալամ:

ՀԵՅ,  
Արևելքի մոնչացնղ ալամ,  
սալամ քեզ:



### ՆՅՈՒԹԱՑԱՆԿ

	Ցերես
1) Սալամ Ալեք բում . . . . .	5
2) Գիր չի . . . . .	7
3) Զիապում . . . . .	11
4) Բումպեյ . . . . .	17
5) Ամեն որ առավոտ . . . . .	20
6) Հարեմից դուրս . . . . .	21
7) Ազրբեյջան . . . . .	23
8) Արևելքի փողոցում . . . . .	28
9) Ամեն տեղ . . . . .	33
10) Սալամ . . . . .	37



75 ԿՈՂԵԿ

ՕՐ

1-0

ՄԱՅ

ԵՎՊԻԿԸ—Գ. ՔՈՉԱՐԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0367764

57712